ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«13» մայիսի 2017 թվականի № 48-Հ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության 2017թվականի փետրվարի 02-ի ԲՓ-09 և տեխնիկական անվտանգության 2017թվականի հունվարի 26-ի թիվ 103 փորձաքննությունների դրական եզրակացությունները՝

Հրամայում եմ

1. «ՍԹՈՈՒՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն)՝ 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/554 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի 7-C_1-II ենթաբլոկի՝ 1.X=4416396 Y=8474346, 2.X=4416447 Y=8474341, 3.X=4416468 Y=8474780, 4. X=4416402 Y=8474783, 5.X=4416377 Y=8474682 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) եզրագծված տարածքում արդյունահանման աշխատանքներ կատարելու համար, հատկացնելով՝ 870,0 հազար մ^3 տրավերտինի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ L-554 ակտը՝ 1.X=4416396 Y=8474346 H=917.0 (h=-17.0), 2.X=4416447 Y=8474341 H=916.0 (h=-16.0), 3.X=4416468 Y=8474780 H=956.0 (h=-36.0) 4.X=4416402 Y=8474783 H=947.0 (h=-27.0) 5. X=4416377 Y=8474682 H=936.0(h=-21.0) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) եզրագծված 3.1 հա տարածքով:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 17400մ^3 տրավերտինի մարվող պաշար:

3. Աշխատակազմի ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի 7-C_1-II ենթաբլոկի՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) և ծանուցել ընկերությանը՝ սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրամադրման թույլտվություն, լեռնահատկացման ակտ, պայմանագիր).

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5 Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ